ՄԱՆԵ ՍԵՐԳԵՅԻ ՍԱՐԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի գիտաշխատող,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի դասախոս
manesarinyan@gmail.com
ORCID ID: 0009-0004-2034-1942
DOI: 10.54503/978-5-8080-1568-5-21

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ *ակադեմիական դպրոց, փիլիսոփայական գրականագիտություն, գրականագիտության գիտականացում, հայկական ռոմանտիզմ, հայոց ազգային գաղափարաբանություն, հայոց գրականության երկու դարը:*

Ներածություն

Սերգեյ Սարինյանը գրականության պատմաբան էր, տեսաբան և գրաքննադատ: Հոդվածում Սերգեյ Սարինյանի գրականագիտական ժառանգությունը դիտարկված է նրա գիտական գործունեության ընդհանուր համապատկերի մեջ: Սարինյանը գրականագիտության մեջ ստեղծեց ակադեմիական դպրոցը և առաջադրեց փիլիսոփայական գրականագիտության մեթոդաբանությունը, որի դրույթները ներկայացրեց «Ինչ է գրականության փիլիսոփայությունը» հոդվածում: Սարինյանը գրում է. «...Կարելի է ասել, որ ես արդի գրականագիտության մեջ ուղղություն եմ տվել փիլիսոփայական գրականագիտութ-

յանը և մեթոդաբանական մեկնաբանություն եմ տվել «ինչ է գրականության փիլիսոփայությունը» հասկացությանը»[1]:

Հոդվածի նպատակն է արժևորել Սերգեյ Սարինյանի գրականագիտական ժառանգությունը՝ ընդգծելով նրա դերը հայ գրականագիտության պատմության մեջ որպես փիլիսոփայական գրականագիտության ուղղության հիմնադիր, որպես գրականագիտության գիտականացմանը հետամուտ տեսաբան, որպես հայկական ռոմանտիզմի «պատմական կատեգորիայի» և հայոց ազգային գաղափարաբանության տեսության ստեղծող: Գրականագիտության գիտականացման հարցը եղել է Սարինյանի գիտական գործունեության առանցքային դրույթներից մեկը, որին նա անդրադարձել է գրեթե բոլոր ուսումնասիրություններում, մենագրություններում և պատմաքննական տեսություններում: Գրականագիտության գիտականացման հիմքում դնելով հումանիտար սկզբունքը՝ Սարինյանը կարևորում էր վերլուծության համադրական մեթոդը, որը գրական երկը և գրողի ողջ ստեղծագործությունը դիտարկում է ձևաբանական և բովանդակային հատկանիշների միասնությամբ՝ քննելով այն հասարակագիտական, փիլիսոփայական, մարդաբանական, հոգեբանական և գեղագիտական շերտերի բարդ համադրության մեջ: Հոդվածում օգտագործվել են վերլուծական և մեկնողական մեթոդները:

Հիմնական շարադրանք

Արցախի գրողների միության նախագահ, բանաստեղծ, երջանկահիշատակ Վարդան Հակոբյանը գրում է. «Սարինյանի գիտական միտքը հայ գրականագիտությունը բարձրացրեց բոլորովին աննախադեպ մակարդակի, բերեց մի ուրույն մտածողություն, որը կարող է խոսել միայն եվրոպական գեղագիտա-

[1] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* հատոր 7, Երևան, «Արմավ» հրատ., 2018, էջ 212–213:

կան մտքի ձեռքբերումների հետ՝ համաշխարհային չափանիշներով»: «Նրա յուրաքանչյուր ձեռնարկում նոր էր, պիտի շեշտել՝ Սարինյանն իր գիտահետազոտական բոլոր աշխատանքներում միշտ հանդես եկավ ոչ թե որպես շարունակող, այլ... սկզբնավորող:... Նա միշտ եղել է առաջինը՝ անկրկնելի իր գրածով, իր հետազոտական մտքի խորությամբ, նորարարական իր պեղումներով, ուշագրավ հայտնագործություններով»[2]:

Սերգեյ Սարինյանի աշխատություններն ու ուսումնասիրությունները նվիրված են գրական ուղղությունների, գրականագիտության մեթոդաբանության և գրականագիտության գիտականացման հարցերին: «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ», «Հայկական ռոմանտիզմ» ուսումնասիրությունները, Ռաֆֆու, Մուրացանի, Շանթի, Տերյանի մասին մենագրական աշխատությունները, Պարույր Սևակին նվիրված «Բանաստեղծության գիտությունը» հոդվածների ժողովածուն, «Գրական դիտողություններ», «Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը», «Գեղարվեստական գրականության պատմականությունը», «Սերունդներ և ավանդներ» գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուները, «Հայ գաղափարաբանություն» պատմաքննական տեսությունը, «Ի հեճուկս» հուշագրությունը, Զորի Բալայանին նվիված «Շարունակվող լեգենդ» և «Ապաշխարանք և թողություն» աշխատությունները, «Հայոց գրականության երկու դարը» յոթհատորյակը, կոլեկտիվ աշխատությունները հիրավի մնայուն արժեքներ են հայ գրականագիտական մտքի պատմության մեջ:

Ակադեմիայի թղթակից անդամ Ալիտա Դոլուխանյանը գրում է. «Գրական երկերի նրա վերլուծականներում կարելի է

---

[2] **Գրիգորյան Ա.,** *Գեղագիտությունը և բանաստեղծությունը Սարինյանի հետ*, Ստեփանակերտ, «Դպրատուն» հրատ., 2018, էջ 288, 289:

տեսնել գիտական ընկալման ու մեկնաբանման ամենատարբեր դիտակետեր՝ փաստականը, տեսականը, փիլիսոփայականը, քաղաքականը, ազգայինը, հոգեբանականը, գաղափարախոսականը, ենթագիտակցականը, ավանդականը, համամարդկային-համընդհանուրը, ժամանակակիցը, ավանգարդայինը»[3]:

Սարինյանն ինքը հավաստում է, որ գրականագիտության գիտականացման հարցը եղել է իր գիտական գործունեության հիմնական դրույթներից մեկը, որին անդրադարձել է գրեթե բոլոր ուսումնասիրություններում և մենագրություններում: «Իմ ելակետը մշտապես եղել է ապացույցը, - գրում է նա, - որ գրականագիտությունն ու քննադատությունը գիտություն են, տեսակետ, որ ոչ ակադեմիական մակարդակներում այսօր էլ վեճի առիթ է տալիս»[4]:

«Ինչ է գրականության փիլիսոփայությունը» հոդվածում Սարինյանը ներկայացնում է գրական երկի և գրողի գեղագիտական համակարգի քննությունն ու մեկնաբանությունը փիլիսոփայական գրականագիտության մեթոդաբանությամբ՝ միևնույն ժամանակ բացահայտելով գեղարվեստական երկի և փիլիսոփայական համակարգերի իմացաբանական կապը: «...Գրականության փիլիսոփայությունը - գրում է նա, - բնավ չի նշանակում լուսաբանել փիլիսոփայական կատեգորիաների ըմբռնումը գրողի աշխարհայացքում: Դա գրականագետի գործը չէ: Այդ կարող է անել փիլիսոփան: Գրականության փիլիսոփայությունը դա յուրահատուկ փոխաձևություն է կյանքի փիլիսոփայության, ուր գրողը և գրական հերոսը կազմավորում են կենսաբանական, բարոյական, էթիկական, քաղաքացիական իրենց վարքը: Այն ներծծված է գեղարվեստական երկի բնագրի

---

[3] **Հայ գրականագիտության դասականը,** Հոդվածների ժողովածու, «Նախաբան», Երևան, «Լուսակն» հրատ., 2014, էջ 5:

[4] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* հատոր 7, Երևան, «Արմավ» հրատ., 2018, էջ 211:

մեջ և անդրադարձնում է մարդու տիեզերական խոհերի, բնության, սիրո, կյանքի ու մահվան, կրոնական հավատքի և այլ իռացիոնալ զգացությունների ամբողջությունը»[5]:

Պերճ Զեյթունցյանի գնահատմամբ, «Սերգեյ Սարինյանն ի տարբերություն «բելետրիստ» կամ «շարադրող» գրականագետների, զտարյուն գիտնական է, մտածող, և միտք շարժող նրա աշխատությունների մեջ ոչ միայն տվյալ գրողի կամ տվյալ երկի էությունն է բացահայտված, այլև իր՝ հետազոտող գիտնականի սեփական ասելիքը... տվյալ հեղինակի ասելիքի կապակցությամբ»[6]:

Այս տեսակետից Սարինյանը որոշակի քննադատական դիրքորոշում ուներ ինչպես տպավորապաշտական գրականագիտության, այսինքն՝ գրական երկի սուբյեկտիվ անհատական մեկնության հանդեպ, այնպես էլ կառուցվածքային գրաքննադատության նկատմամբ:

20-րդ դարի 20–30-ական թվականներին ամերիկյան գրաքննադատության մեջ Նոր քննադատները և հետո արդեն հիսունական թվականներից ստրուկտուրալիստները նույնպես խնդիր էին դնում գիտականացնել գրականագիտությունը՝ առաջադրելով գրական վերլուծության նոր մոտեցում՝ կիրառելով մաթեմատիկական սխեմաներ և լեզվաբանական մոդելներ, որոնցում առաջնային ուշադրություն էր դարձվում խորհրդանիշներին, արքետիպերին և նշանների համակարգին:

Սարինյանը, գնահատելով կառուցվածքային վերլուծության դրական կողմերը, այնուամենայնիվ, ընդգծում է դրա որոշ սահմանափակությունը՝ նշելով, որ այս մոտեցումը հաճախ օտարում է գրական երկի բովանդակությունից փիլիսոփայա-

---

[5] **Սարինյան Ս.**, *Հայոց գրականության երկու դարը*, հատոր 3, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, էջ 20:

[6] **Գրիգորյան Ա.**, *Գեղագիտությունը և բանաստեղծությունը Սարինյանի հետ*, էջ 73:

կան, հոգեբանական, բարոյական և գաղափարական մակարդակները՝ գրական երկը դիտելով սոսկ որպես կառուցվածք և նշանների համակարգ՝ դրանով իսկ անտեսելով տեքստի բազմաշերտ իմաստները և գրողի՝ որպես հեղինակի ստեղծագործական անհատականությունը:

Փիլիսոփայական գրականագիտությունն ընդունելով որպես գիտականացման հիմունք՝ Սարինյանը պարզաբանում է. «Պետք է գիտականացնել գրականագիտությունը, բայց ոչ թե ըստ ստրուկտուրալիզմի ձևաբանության, այլ ըստ գեղագիտական փիլիսոփայական համարժեքի...»[7]: «Էթիկական ընթերցումը վերադարձնում է գրական երկի բովանդակային շերտերը, - շարունակում է նա, - բացահայտում հասարակության կառուցվածքի ներքին տեղաշարժերը, վերարժեքավորում է ազգ, հայրենիք, պետություն, սեր, իդեալ արժեքները... գրականագիտությունը վերադարձ է կատարում դեպի հումանիտար գիտությունների համակարգ»[8]:

Այսպիսով, գրականության գիտականացման սկզբունք համարելով հումանիտար հիմունքը՝ Սարինյանն առանձնապես կարևորում էր նաև վերլուծական մեթոդի ընտրությունը՝ որը, ըստ գրականագետի, վերլուծության համադրական մեթոդն է՝ ինքնին «համարժեք գրականության փիլիսոփայական մեկնության» գրական երկի բովանդակային և ձևաբանական հատկանիշների միասնությամբ, որտեղ գեղարվեստական երևույթները դիտվում են մարդաբանական, հոգեբանական, սոցիալ-պատմական և փիլիսոփայական համաբնագրերում:

Ըստ Սարինյանի՝ գրականության փիլիսոփայությունն ընդլայնում է գրականության սահմանները և նրա հայացքն ուղղում դեպի «տիեզերական կեցության առեղծվածը»՝ վերաճելով

---

[7] Նույն տեղում, էջ 205:

[8] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դպրը*, հատոր 7, 54–55:

ունիվերսումի՝ ամենայն գոյի, փիլիսոփայության: Այս տեսակետից, «Գրականագիտությունը հումանիտար գիտությունների համակարգում» հոդվածում անդրադառնալով «գրականության տեսական իմացականությանը»՝ Սարինյանը վկայակոչում է 20-րդ դարի 20-ական թվականների ռուս աստվածաբան փիլիսոփա Վ. Վերնադսկու նոոսֆերայի (բանականության սֆերայի) տեսությունը, ըստ որի՝ «երկիր-մոլորակը շրջանակված է ոգու (բանականություն, իդեա) պարագծով, որը պահպանում է մոլորակի տիեզերական արարչությունը»: Գրականությունը համարելով յուրատեսակ նոոսֆերա մարդու հոգևոր կառուցվածքում՝ Սարինյանը Թումանյանին իր մշակութաբանական երևութականությամբ դիտում է տիեզերական փիլիսոփայության պարագծում: «Պետք է ընդունել, - գրում է նա, - որ բիոսֆերան ճանաչելի է ոչ միայն մոլորակային պարագծով, այլև անհատի կենսաբանական գոյությամբ, որպես ֆիզիկական ձևույթ: Գիտակցական թե անգիտակցական հղումներով անհատի կենսաբանական կազմույթը ներարկվում է միֆոլոգիական, կրոնական, մշակութաբանական առարկայություններով, որոնք ձևավորում են նրա անհատականությունը որպես տիեզերական սուբյեկտ: Այս իմաստով, նոոսֆերայի համարժեք կազմույթ է Թումանյանը, որպես կամքի, անհատականության և ճակատագրի խորհրդանիշ: Սա առերևույթ չի գիտակցվում, սակայն միանգամայն ստույգ է մարդաբանական տեսակետից»[9]:

Գրականագիտական իր ուսումնասիրություններում Սարինյանն ընդգծում է երեք հիմնական շերտ՝ տեսություններ, մենագրություններ և գրականության պատմության դասակարգում: Մենագրություններում Սերգեյ Սարինյանը գրողի ստեղծագործությունը ուսումնասիրում է գաղափարական, գեղագիտական, իմացաբանական համատեքստում՝ իր բնորոշմամբ

[9] Նույն տեղում, էջ 47–48:

«իրերի աշխարհից» անցում կատարելով դեպի սիստեմների, այսինքն՝ փիլիսոփայական համակարգերի աշխարհ:

«Այստեղ ևս, - գրում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավագ Խաչատրյանը, - գրականագետը նորարար եղավ՝ ստեղծելով մենագրության իր տիպը՝ «ժանրը» ազատելով փաստի պատմողական ոճից և նորաձևելով այն տեսականացված գիտությամբ»[10]:

Ռաֆֆուն, Մուրացանին, Տերյանին, Շանթին նվիրված ուսումնասիրություններում Սարինյանը հեղինակների ստեղծագործությունները քննում է էթիկական, գեղագիտական և փիլիսոփայական համակարգերի համադրության մեջ: 1985 թ. լույս է տեսնում «Ռաֆֆի» մենագրությունը «Գաղափարների և կերպարների համակարգը» ենթավերնագրով, որտեղ գրականագետը ուսումնասիրում է գրողի «սիստեմների աշխարհը»: Սարինյանը գրում է, որ եթե գրողի մասին «առաջին գիրքը բացահայտում է Ռաֆֆու «իրերի աշխարհը», ապա... այստեղ վերլուծվում են Ռաֆֆու արվեստի փիլիսոփայությունը, նրա ռոմանտիկական ուտոպիաների (սոցիալական, բնության, սիրո, ազատության, պատմափիլիսոփայության և այլն) սոցիալաբանական ու միֆոլոգիական հղումները»[11]:

Անդրադառնալով «Մուրացան. տիպաբանությունը, էթիկան, պատմության փիլիսոփայությունը» մենագրությանը՝ Սարինյանը փաստում է, որ Մուրացանի մասին հետազոտության առիթ է տվել գրողի նամականին, որտեղ նա գտել է այն մոտիվը, որը կազմում է գրողի գեղագիտության ու աշխարհայացքի առանցքը: «Այսինքն այն, - գրում է Սարինյանը, - ինչ իրերի աշ-

---

[10] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարր,* հատոր 3, էջ 7:

[11] **Սարինյան Ս.,** *Ի հեճուկս. Հուշերի երկրի առասպելը,* Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2006, էջ 99:

խարհի ետևում թաքցնում է «սիստեմների աշխարհը»: Իսկ վերջինս իմ հետազոտությունների փիլիսոփայական հիմքն է»[12]:

Անդրադարձ կատարելով Շանթին նվիրված մենագրությանը՝ Սարինյանը խոստովանում է, որ 1989 թ. եկել էր Լևոն Շանթին անդրադառնալու հոգեբանական ժամանակը, որը նաև Լևոն Շանթի ժամանակն էր, ով պետք է «հայտնվեր արցախյան շարժման և ազգային ազատագրական պայքարի բուռն վերելքի պահին, հիշեցնելու հայոց ազգային անկախության իր պատմախոսությունը»[13]:

Որպես «Վահան Տերյան» մենագրության շարժառիթ գրականագետը նշում է գրողի կենսագրական հատվածների և բանաստեղծական շարքերի մոտիվների միջև կապի հայտնությունը՝ «Անջատում - Անդարձություն - Հայտնություն - Վերադարձ», որոնք կազմում են Տերյանի պոետիկայի գեղագիտական-փիլիսոփայական համակարգը:

Պարույր Սևակին նվիրված «Բանաստեղծության գիտությունը» հոդվածների ժողովածուի մեջ Սարինյանը քննում է Սևակի բանաստեղծական սիմֆոնիզմի և պատմականության գեղագիտությունը և Սևակի բանաստեղծության պատկերի դիալեկտիկան:

Սերգեյ Սարինյանն իր կյանքի գիրքը համարում էր «Հայ գաղափարաբանություն» աշխատությունը, որտեղ նա տալիս է վերջին 300 տարիների ազգային գաղափարաբանության պատմաքննական տեսությունը՝ հարցը քննելով պատմական, գեղարվեստական, փիլիսոփայական և մշակութաբանական հարացույցում՝ ստեղծելով «հայոց ազգային գաղափարաբանության գիտությունը»: Պրոֆեսոր Ավագ Խաչատրյանը գրում է. «Եվ, այնուամենայնիվ, Սարինյանը դեռ պիտի գերազանցեր

[12] Նույն տեղում, էջ 346:
[13] Նույն տեղում:

ինքն իրեն: Ես նկատի ունեմ «Հայ գաղափարաբանություն» աշխատությունը»[14]:

««Հայ գաղափարաբանություն»-ը իմ կյանքի գիրքն է, - խոստովանում է Սարինյանը, - և նրանում առկա է իմ գիտական գործունեության տասնամյակների փորձը: Ուշադիր լինելու պարագայում կարելի է նկատել, որ գաղափարը մի էական մոտիվ է գծում իմ գրեթե բոլոր ուսումնասիրություններում»[15]:

«Հայ գաղափարաբանությունը երազ չէ, և նրա բովանդակությունը միայն անկախ պետականության երազանքը չէ»: Սարինյանն այն սահմանում է որպես «պատմության ինքնաստեղծման գաղափարաբանություն...»[16]:

Ըստ Սարինյանի՝ նման ուսումնասիրություն կարող էր իրականացվել միայն անհատական ընտրությամբ, որովհետև այն համադրում է պատմությունը, գրականագիտությունը, փիլիսոփայությունը և հասարակական մտքի պատմությունը, սինթեզելով «ազգի գոյաբանության և բնապատմական ինքնության տեսական-փիլիսոփայական եզրերը»[17]:

Բացի գրականագիտության մեթոդաբանության հարցերից, Սարինյանի հետազոտությունների առանցքում են հայտնվել գրական ուղղությունների քննության խնդիրները: 1953 թ. նա պաշտպանում է «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» թեկնածուական թեզը, իսկ 1966 թ. լույս է տեսնում «Հայկական ռոմանտիզմ» մենագրությունը: Բուլղարացի գրականագետ Քրիստո Գենովը խոստովանում է, որ Սարինյանի «Հայկական ռոմանտիզմի» մեթոդաբանությունն օգնել է իրեն գրելու «Բուլղարական ռոմանտիզմ» մենագրութ-

---

[14] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* հատոր 3, էջ 17:

[15] Նույն տեղում, էջ 18:

[16] Նույն տեղում, էջ 604:

[17] **Սարինյան Ս.,** *Հայ գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն,* Երևան, «Զանգակ-97» հրատ., 1998, էջ 5:

յունը: Հղում կատարելով Սարինյանի գնահատականներին՝ Վարդան Հակոբյանը գրում է, որ Սարինյանն առաջինն էր, որ «կատարեց «գրականության գիտական համակարգումը», բացահայտեց, թե ինչպես «հայ աշխարհայացքը դասականությունից անցում կատարեց ռոմանտիզմին», վեր հանեց ու գիտականորեն լուսաբանեց «հայկական ռոմանտիզմի ծագման» ազգային առանձնահատկությունները, նրա զարգացման օրինաչափությունները, հայտնաբերեց հայկական ռոմանտիզմի «պատմական կատեգորիան»[18]:

Սարինյանն իր աշխատանքի նորույթը համարում էր «հայկական կլասիցիզմի և ռոմանտիզմի ազգային բնույթի բացահայտումը և ապա նյութի ամբողջական ընդգրկումը արևելահայ և արևմտահայ հատվածներով՝ որպես միասնական ազգային գեղարվեստական զարգացում»[19]:

Սարինյանի գիտական գործունեության մեջ մեծ տեղ են զբաղեցնում կոլեկտիվ աշխատությունները: Նրա գիտական ղեկավարությամբ, ընդհանուր խմբագրությամբ և հեղինակային մասնակցությամբ հրատարակվել են հետևյալ հիմնարար աշխատությունները՝ «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը, «Հայ քննադատության պատմություն» երկհատորյակը և «Հայ վեպի պատմություն»-ը, որոնք իրենց գիտական արժեքով և համակարգվածությամբ մեծ նվաճում են հայ գրականագիտության և գրաքննադատության պատմության մեջ: «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը 1980 թ. արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: «Կոլեկտիվ աշխատանքի կազմակերպումը դժվարին և բարդ երևույթ է,- խոստովանում է Սերգեյ Սարինյանը - ... կառուցել հարյուրամյակի գրական-գեղարվեստական և տեսական մտքի

---

[18] **Գրիգորյան Ա.,** *Բանաստեղծությունը և գեղագիտությունը Սարինյանի հետ*, էջ 18:

[19] **Սարինյան Ս.,** *Ի հեճուկս. Հուշերի երկրի առասպելը*, էջ 112:

զարգացման օրինաչափություններն ու պարբերացման սկզբունքները, ստեղծել միասնական համակարգ և ոճական միասնություն՝ իրոք որ պահանջում էր էներգիայի հսկայական վատնում: Այդ էներգիայի անհատական օգտագործման պարագայում ես, իհարկե, կարող էի գրել մի քանի մենագրություններ, սակայն, ես ափսոսանքի հետ գոհանում եմ նաև նրանով, որ այնուամենայնիվ արդյունքը մեծանշանակ է: Այդ ուսումնասիրությունները իրավամբ կմնան որպես հայ գրականագիտության բարձրագույն նվաճումներից մեկը»: «Հայ գրականության պատմություն» հինգհատորյակը մեթոդաբանական լուծում տվեց հարցի դրվածքին՝ ազգային գրականությունը ներկայացնելով գեղարվեստական զարգացման միասնության մեջ՝ տիպաբանական համակարգի ընդհանրությամբ: Մեթոդաբանական նույն սկզբունքով է կառուցված նաև «Հայ քննադատության պատմություն» երկհատորյակը»[20]:

Սերգեյ Սարինյանը հինգհատորյակը գնահատում է որպես «գրականագիտական բացառիկ ուսումնասիրություն, կարելի է ասել չգերազանցված, որի գիտական արժեքն ամենից առաջ խորապես ստույգ համակարգությունն է»[21]:

Ա. Դոլուխանյանը գրում է. «Առանց չափազանցնելու կարող ենք ասել՝ Սարինյանը գրել է 19–20 դարերի հայ գրականության փիլիսոփայության պատմությունը»[22]:

Այս շարքում կուզեի առանձնացնել նաև 2015 թ. հրատարակված «Հայոց գրականության պատմություն» կոլեկտիվ ուսումնասիրության 3-րդ հատորը, որը լույս է տեսել Սարինյանի ընդհանուր խմբագրությամբ և գիտական ղեկավարությամբ:

---

[20] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* հատոր 4, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004, էջ 215:

[21] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* հատոր 7, էջ 210:

[22] **Հայ գրականագիտության դասականը,** *Հոդվածների ժողովածու,* «Դասական գրականագետը», Երևան, «Լուսակն» հրատ., 2014, էջ 22:

Հատորի բոլոր ներածական բաժինները գրել է Սարինյանը, որտեղ ներկայացնում է հայոց գրականության պարբերացման նոր սկզբունքներ և մոտեցումներ: Մի հարցազրույցում նա նկատում է. ««Հայոց գրականության պատմության» 3-րդ հատորը ոչ թե հինգհատորյակի բացառումն է, այլ նրա տրամաբանական շարունակությունը: Պատկերավոր ասած, եթե հինգհատորյակը ներկայացնում է գրականության պատմության «իրերի աշխարհը», ապա 3-րդ հատորը գործ ունի «սիստեմների աշխարհի» հետ, որն արտացոլում է գիտության պատմության օրինաչափ զարգացումը բանասիրությունից դեպի տեսականացված պատմություն»: «Հատկանիշներ,- շարունակում է նա նույն երկխոսության մեջ,- որոնք պայմանավորում են ակադեմիական պատմության մեթոդը, ոճը, կառուցվածքը»[23]:

Սարինյանի գրականագիտական գործերի շարքում առանձնակի տեղ է գրավում «Հայոց գրականության երկու դարը» յոթհատորյակը, որը սինթեզում և ամբողջացնում է նրա գրականագիտական, տեսական-փիլիսոփայական և գեղագիտական հայացքները, որտեղ գրականագետն անդրադառնում է գրական երևույթների վերաիմաստավորմանը և ժամանակակից գրականության զարգացման խնդիրներին: Չորրորդ հատորի համար 2005 թ. Սարինյանն արժանացել է Նախագահական մրցանակի: Գրեթե բոլոր հատորները կառուցված են նույն սկզբունքով՝ պատմություն և փիլիսոփայություն, պատմություն և տեսություն, գրականություն և տեսություն, լուսանցանշումներ, անդրադարձներ և երկխոսություններ ու հարցազրույցներ, որոնք առանձնանում են Սարինյանի՝ որպես գեղագետի և մտածողի աշխարհայացքի անհատական դրսևորումներով, փիլիսոփայական մեկնություններով և սարինյանական բանաձևումներով ու անկրկնելի ոճով: Այս հատորներում նա քննում է

[23] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* հատոր 7, էջ 235:

գրականության պատմությանը, տեսությանը և գրաքննադատությանը վերաբերող առանցքային և մեթոդաբանական հարցեր: Սարինյանը «Հայոց գրականության երկու դարը» հատորների շարքը դիտում է որպես տեսական ուսումնասիրություններ, որոնք ներկայացնում են «նոր շրջանի հայոց գրականության բոլոր հանգուցային հարցերը»[24]:

Հոդվածն ամփոփում եմ Վարդան Հակոբյանի գնահատականով. «Բնությունը նրան օժտել էր անսահման բացառիկությամբ ու ինքնատիպությամբ՝ գիտության, փիլիսոփայության, արվեստների, կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Հայոց քարքարոտ հողի հանճարն էր խոսում հայ գրականագիտության գագաթնային երևույթի, ինչպես ասում են, օրենսդրի՝ Սերգեյ Սարինյանի մեջ»[25]: Իսկ Սերգեյ Սարինյանին ժամանակակից հայ գրաքննադատական մտքի օրենսդիր անվանել է գրող, հրապարակախոս Լևոն Ամանյանը:

МАНЭ САРИНЯН

Кандидат филологических наук,
научный сотрудник Института литературы
им. М. Абегяна НАН РА,
Российско-Армянский (Славянский) университет, доцент

ЛИТЕРАТУРОВЕДЧЕСКОЕ НАСЛЕДИЕ СЕРГЕЯ САРИНЯНА

Резюме

Сергей Саринян — литературовед, теоретик и литературный критик. В статье его литературоведческое наследие рассматрива-

---

[24] Նույն տեղում, էջ 210:

[25] **Գրիգորյան Ա.,** *Գեղագիտությունը և բանաստեղծությունը Սարինյանի հետ*, էջ 211:

ется в более широком контексте научной деятельности. Саринян стал основателем академической школы в области литературоведения и разработал методологию философской литературной критики, изложив её принципы в статье “Что такое философия литературы?”.

Цель статьи — подчеркнуть значимость литературоведческого наследия Сергея Сариняна, акцентируя внимание на его новаторской роли в развитии армянского литературоведения. Он выступал как основоположник философского подхода к литературе, теоретик, последовательно применявший научный метод, автор концепции армянского романтизма как “исторической категории” и разработчик теории армянской национальной идеологии.

Вопрос научного развития литературных исследований был одним из ключевых принципов академической деятельности Сариняна. Это отражено практически во всех его трудах – исследованиях, монографиях и историко-критических работах. Поставив гуманитарный принцип в основу научного анализа, он подчёркивал важность интегративного метода, при котором литературное произведение и всё творчество автора рассматриваются в единстве формы и содержания. Такой подход позволяет исследовать литературу в контексте сложного взаимодействия социологических, философских, антропологических, психологических и эстетических измерений.

В статье применены аналитический и интерпретационный методы исследования.

Ключевые слова: *академическая школа, философское литературоведение, научный подход в литературоведении, армянский романтизм, армянская национальная идеология, два века армянской литературы.*

MANE` SARINYAN
Candidate of Philological Sciences,
Researcher at the Institute of Literature after
M. Abeghyan of NAS of RA,
Russian-Armenian (Slavonic) University, Associate Professor

SERGEY SARINYAN'S LEGACY AS A LITERARY CRITIC

Abstract

Sergey Sarinyan was a distinguished literary historian, theorist, and literary critic. This article examines Sergey Sarinyan's literary-critical legacy within the broader context of his scholarly contributions. Sarinyan established an academic school of literary studies and developed the methodology of philosophical literary criticism, outlining its principles in his seminal article "What Is the Philosophy of Literature?"

The aim of this article is to underscore the significance of Sarinyan's scholarly heritage, emphasizing his innovative role in the development of Armenian literary studies. He is recognized as the founder of philosophical literary criticism, a theorist committed to the scientific advancement of the field, the originator of the concept of Armenian Romanticism as a "historical category", and the creator of a theory of Armenian national ideology.

The scientization of literary studies remained central throughout Sarinyan's academic career, as evidenced in his extensive body of research, monographs, and critical-historical works. He approached the scientific advancement of literary studies through a humanitarian lens, placing at its core the integrative method of analysis - one that examines a literary work, or a writer's entire oeuvre, through the unity of form and content. This method positioned literature within a

dynamic interplay of sociological, philosophical, anthropological, psychological, and aesthetic dimensions.

Analytical and interpretive methods have been employed in the article.

Keywords: *Academic School, philosophical literary criticism, scientization of literary criticism, Armenian Romanticism, Armenian National Ideology, Two Centuries of Armenian Literature.*